ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/4

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Գագիկ Ասրյանը, Աննա Ավալյանը, Սամվել Մակարյանը, Ժիրայր Միրզոյանը, Էմանույել Ուզունյանը, Արմինե Պապյանը, Վահրամ Սուքիասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Միեր Պապյան, Արթուր Թումանյան, Վաղարշակ Գրիգորյան, Աննա Նավասարդյան, Լեվոն Մադյան, Ալինա Ալավերդյան, Գեղեցիկ Քալանթարյան, Մելինե Պապյան, Աշխեն Եսայան, Գագիկ Դալլաքյան

Նիստը վարում էր Բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետի ժ/պ՝ Աննա Նավասարդյանը

Լսեցին
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԵԿԻ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԸՍՏ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Թումանյան/

2)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ և(ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Թումանյան/

3)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Թումանյան/

4)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՎՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 144 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻ

/Զեկ.Մ.Պապյան/

5)ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

6)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-014-0300-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,09678 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՆԴԱՎՈՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

7)11-047-0188-0018 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.08481 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

8)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

9)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00138 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԵՐԿԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

10)11-047-0162-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.42220 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՔ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, 0.10410 ՀԱ, 0.14054 ՀԱ ԵՎ 0.16058 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Վ.Գրիգորյան/

11)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա. Հակոբյան/

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 418-Ա/.

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՎՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 144 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ, 51-րդ, հոդվածներով,12-րդ հոդվածի 14-րդ մասով,13-րդ հոդվածի 10-րդ մասով, և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր բնակավայրում 144 աշակերտի համար նախատեսված կրթահամալիր կառուցելու նախագծի վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 422-Ա/

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԸՍՏ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 18-րդ, 19 – րդ կետերով, «Տեղականտուրքերիևվճարներիմասին» ՀՀ օրենքի 8, 9, 10, 11 և 12 հոդվածների պահանջներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 4-րդ մասով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի
տարածքում 2025 թվականի համարտեղականտուրքերի, վճարների, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ըստգոտիավորման, համաձայն N 7 և N 8 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանպահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 419-Ն/

Լսեցին
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ և(ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածիպահանջներով,

Բերդ համայնքիավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները էլեկտրոնային եղանակովվարելուհամար:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 420-Ն/

Լսեցին
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի հարկերի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> 28.04.2012թ. ՀՀ օրենքով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի հարկերի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 421-Ա/

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՎՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 144 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ, 51-րդ, հոդվածներով,12-րդ հոդվածի 14-րդ մասով,13-րդ հոդվածի 10-րդ մասով, և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նավուր բնակավայրում 144 աշակերտի համար նախատեսված կրթահամալիր կառուցելու նախագծի վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 422-Ա/

Լսեցին

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԳԱԳԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով և հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1. Դադարեցնել 2019թ. հոկտեմբերի 25-ին կնքված՝
Տավուշի նոտարական տարածքի նոտարական գրանցամատյանում 3244 համարի տակ գրանցված անհատույց օգտագործման պայմանագիրը:

2. Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք,Արծվաբերդ գյուղ,16 փողոց, 2 նրբանցք, 10 շենք հասցեում գտնվող հիվանդանոցի 1-ին հարկի 152,1 ք.մ ընդհանուր մակերեսով տարածքը, որից՝ N 2 սենյակը՝ 19.3քմ մակերեսով,N 3 սենյակը՝ 1.0քմ մակերեսով, N 4 սենյակը՝ 15.3քմ մակերեսով, N 5 սենյակը՝ 8.7քմ մակերեսով, N 6 սենյակը՝ 4.4քմ մակերեսով, N 7 սենյակը՝ 2,8քմ մակերեսով, N 8 սենյակը՝ 1.3քմ մակերեսով, N 9 սենյակը՝ 12.9քմ մակերեսով, N 10 սենյակը՝ 4.0քմ մակերեսով, N 52 սենյակը՝ 9.2քմ մակերեսով, N 53 սենյակը՝ 1.2քմ մակերեսով, N 54 սենյակը՝ 1.2քմ մակերեսով, N 55 սենյակը՝ 2.5քմ մակերեսով, N 56 սենյակը՝ 22.7քմ մակերեսով, N 57 սենյակը՝ 11.4քմ մակերեսով, N 58 սենյակը՝ 11.7քմ մակերեսով, N 59 սենյակը՝ 15.7քմ մակերեսով, N 60 սենյակը՝ 4.7քմ մակերեսով, N 61 սենյակը՝ 1.1քմ մակերեսով և N 62 սենյակը՝ 1.0քմ մակերեսով, առանց մրցույթի, վարձակալությամբ տրամադրել Գագիկ Գարեգինի Դալլաքյանին բժշկական գործունեություն իրականացնելու համար:

3. Վարձավճարի չափ սահմանել՝ 15 210 դրամ / 1ք.մ՝ 100 դրամ/

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 /երեք/ ամսվա ընթացքում բժշկական ծառայություններ չմատուցելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

Կողմ-6 Դեմ-4 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 423-Ա/

Լսեցին
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-014-0300-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,09678 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՆԴԱՎՈՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով,

հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Արծվաբերդ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության11-014-0300-0008 ծածկագրով, 0,09678 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողամասը:

2.Սահմանել 0,09678 հա մակերեսով վարելահող հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 3000 /երեք հազար/ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 424-Ա/

Լսեցին

11-047-0188-0018 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.08481 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ.ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Ներքին Կարմիր Աղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 11-047-0188-0018 ծածկագրով, 0.08481 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը:

2.Սահմանել 0.08481 հա մակերեսով վարելահող հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 3 000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 425-Ա/

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով, «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւլրացումներկատարելումասին 2017 թվականիհունիսի 9-իՀՀօրենքի 1-ինհոդվածովև 18.53 հավելվածով,Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Բերդ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 11-002-0237-0028 կադաստրային ծածկագրով արոտավայրում առկա կիսաչոր երեք ընկուզենի ծառերը հատելու և շուրջ 2 խմ. վառելափայտը ընդգրկել Բերդ համայնքի գույքացանկում:

2. Տալ համաձայնություն Բերդ համայնքի գույքացանկում ընդգրկված 2 խմ. վառելափայտը անհատույց օգտագործման տրամադրել Բերդ քաղաքի բնակիչ Արթուր Վարդգեսի Ծատուրյանին՝ համաձայն Բերդի համայնքապետարան ներկայացված դիմումի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 426-Ա/

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00138 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԵՐԿԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 2001թ.ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդմածի 1 մասի 8 րդ կետով և հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում չի գտնվում ինժիներատրանսպորտային

օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի, Բերդ քաղաքի վարչական սահմաններում գտնվող Նարինե Սերյոժայի Երկանյանի սեփականություն հանդիսացող ՀՀ Տավուշի մարզ, Բերդ համայնք, քաղաք Բերդ, Գ. Նժդեհի 111 հասցեում գտնվող 11-002-0140-0012 ծածկագրով, 0.0221 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության անշարժ գույքին՝ ընդլայնման նպատակով, ՀՀ Տավուշի մարզ, համայնք Բերդ, քաղաք Բերդ Գ. Նժդեհի 113 հասցեում գտնվող, 11-002-0140-0034 ծածկագրով 0.00138 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Նարինե Սերյոժայի Երկանյանին:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 427-Ա/

Լսեցին

11-047-0162-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.42220 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՔ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, 0.10410 ՀԱ, 0.14054 ՀԱ ԵՎ 0.16058 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, Ներքին Կարմիր Աղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 11-047-0162-0004 ծածկագրով, համայնքային

սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը բաժանել 3 /երեք/ մասի՝ 0.10410 հա մակերեսով, 0.14054 հա մակերեսով, 0.16058 հա մակերեսով հողամասերի, աճուրդով օտարելու համար:

2. Մեկնարկային գին սահմանել 0.10410 հա մակերեսով հողամասի համար՝ 110 000 /մեկ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ, 0.14054 հա մակերեսով հողամասի համար՝ 150 000 / մեկհարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, 0.16058 հա մակերեսով հողամասի համար՝ 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 428-Ա/

Լսեցին

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 16:00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 429-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՄԱՅԱԿ ԱԴԱՄՅԱՆ

ՆԵԼԼԻ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՋՎԱՐԴ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Բերդ համայնքի ղեկավար

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Աննա Նավասարդյանը